

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«ՕՏԱՐԵՐԿՐԱԳԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈՂՎԱԾ 1.

«Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-47-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 7-րդ հոդվածի 1-ին մասում «90» թիվը փոխարինել «180» թվով:

ՀՈՂՎԱԾ 2.

1. Օրենքի 9-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1. մասով.

«4.1. Սույն հոդվածի 4-րդ մասում նշված պետությունների՝ ազգությամբ հայ քաղաքացիները Հայաստանի Հանրապետության սահմանային անցման կետերում կարող են ստանալ մուտքի վիզա առանց հրավերի: Ազգությամբ հայ հանդիսանալու հանգամանքը հիմնավորող փաստաթղթերի ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

ՀՈՂՎԱԾ 3.

Օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասում <<կարող է մերժվել>> բառերը փոխարինել «մերժվում է» բառով:»:

ՀՈՂՎԱԾ 4.

1. Օրենքի 12-րդ հոդվածը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«ՀՈՂՎԱԾ 12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԼՔԸ

1. Օտարերկրացիները Հայաստանի Հանրապետությունից կարող են դուրս գալ վավերական անձնագրի և մինչև դուրս գալու պահը Հայաստանի Հանրապետության տարածքում նրա՝ օրինական գտնվելը կամ բնակվելը հավաստող վավերական փաստաթղթի առկայության դեպքում, եթե այլ կարգ նախատեսված չէ օրենքով կամ միջազգային պայմանագրերով:

2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով վարչական պատասխանատվության ենթարկված օտարերկրացի առանց վավերական անձնագրի և մինչև Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու պահը Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական գտնվելը կամ բնակվելը հավաստող վավերական փաստաթղթի կարող է դուրս գալ Հայաստանի Հանրապետության տարածքից տուգանքի վճարման մասին անդորրագիրը (տուգանքի վճարումը հավաստող այլ փաստաթուղթը) սահմանային հսկողության մարմնին ներկայացնելու դեպքում:

3. Հայաստանի Հանրապետությունից օտարերկրացու ելքն արգելվում է, եթե օրենքով սահմանված կարգով՝

ա) նրա նկատմամբ նշանակվել է այնպիսի պատիժ, որի կրումը հնարավոր է միայն Հայաստանի Հանրապետությունում՝ մինչև պատիժը կրելու ժամկետի ավարտը կամ պատիժը կրելուց՝ օրենքով սահմանված կարգով ազատվելը.

բ) հարուցված քրեական գործով նրա նկատմամբ կիրառվել է խափանման միջոց, բացառությամբ այն դեպքերի, երբ քրեական հետապնդման մարմինը տվյալ անձին Հայաստանի Հանրապետությունից ելքի գրավոր թույլտվություն է տվել:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված անձանց մասին տվյալները անհապաղ փոխանցվում են Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

Այն դեպքում, երբ վերանում են հանգամանքները, որոնց ուժով արգելվել է օտարերկրացու ելքը Հայաստանի Հանրապետությունից, իրավասու մարմինը կամ պաշտոնատար անձը պարտավոր է անմիջապես տեղեկացնել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնին:»:

ՀՈՂՎԱԾ 5.

1. Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասում «և (կամ)» բառերը փոխարինել «կամ» բառով:

2. Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Հայաստանի Հանրապետության ցամաքային սահմանով երրորդ երկիր տարանցիկ երթևեկող օտարերկրացիները կարող են տարանցիկ վիզա ստանալ նաև առանց դեպի երրորդ երկիր ուղետոմսեր կամ երրորդ երկրի մուտքի վիզա ներկայացնելու:»:

ՀՈՂՎԱԾ 6.

1. Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «գ» և «դ» կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ) Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը, ծնողը կամ զավակը լինելը կամ

դ) Հայաստանի Հանրապետության քաղաքացու կամ Հայաստանի Հանրապետությունում մշտական կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը կամ մերձավոր ազգականը (ծնող, զավակ, եղբայր, քույր տատ, պապ, թոռ) լինելը կամ»:

2. Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետում «ծագումով հայ» բառերը փոխարինել «ազգությամբ հայ» բառերով:

3. Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Սույն հոդվածի 1-ին մասի «գ» և «դ» կետով նախատեսված հիմքով ժամանակավոր կարգավիճակ ձեռք բերած օտարերկրացի ամուսինը Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու հետ ամուսնությունը լուծելու կամ անվավեր ճանաչելու դեպքում կարող է դիմել ժամանակավոր կացության կարգավիճակը երկարաձգելու դիմումով, եթե նա ամուսնության մեջ է գտնվել և Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվել է առնվազն մեկ տարի:»:

ՀՈՂՎԱԾ 7.

Օրենքի 16-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀՈՂՎԱԾ 16. ՄՇՏԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՏԱՆՈՒ ՀԻՄՔԵՐՈՆ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՆ

1. Մշտական կացության կարգավիճակը տրվում է օտարերկրացուն, եթե նա՝

ա) ապացուցում է Հայաստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող ամուսնու կամ մերձավոր ազգականների (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) առկայությունը, Հայաստանի Հանրապետությունում ապահովված է բնակարանով և գոյության միջոցներով և մինչև մշտական կացության կարգավիճակ ստանալու համար դիմում ներկայացնելն օրենքով սահմանված կարգով առնվազն երեք տարի բնակվել է Հայաստանի Հանրապետությունում կամ

բ) ազգությամբ հայ է կամ Հայաստանի Հանրապետությունում իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն:

2. Մշտական կացության կարգավիճակը տրվում է 5 տարի ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ նույն ժամկետով երկարաձգելու հնարավորությամբ: Մշտական կացության քարտը երկարաձգելու դիմումը պետք

է ներկայացվի մշտական կացության քարտի վավերականության ժամկետը լրանալուց առնվազն 30 օր առաջ:»:

ՀՈՂՎԱԾ 8.

Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասում «ճագումով հայ» բառերը փոխարինել «ազգությամբ հայ» բառերով:

ՀՈՂՎԱԾ 9.

1. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետում «նախատեսված» բառից հետո լրացնել «միջին ծանրության,» բառերը:

2. Օրենքի 19-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով.

«Սույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դրույթները չեն տարածվում Հայաստանի Հանրապետությունում օրինական կարգով բնակվող ամուսին, ծնող կամ զավակ ունեցող անձանց վրա:»:

ՀՈՂՎԱԾ 10.

1. Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի վերջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն մասով նախատեսված հիմքերով մերժվում է օտարերկրացու կացության կարգավիճակը երկարաձգելու վերաբերյալ դիմումը:»:

ՀՈՂՎԱԾ 11. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերի ցանկը Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ ԻԿ

ՀՀ Աժ կողմից 2011 թվականի սեպտեմբերի 14 –ին առաջին ընթերցմամբ ընդունված «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների մասին

ՀՀ	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, մասը	Առաջարկությունը	Եզրակացությունը
1	2	3	4	5
1.	ՀՀ կառավարություն	Հոդված 2	Նախագծի 2-րդ հոդվածում նշված փաստաթղթերի ցանկը՝ ՀՀ կառավարության կողմից հաստատելու հստակ ժամկետ սահմանել:	Առաջարկությունն ընդունվել է: Փաստաթղթերի ցանկը սահմանելու եռամսյա ժամկետ է սահմանվել օրինագծի անցումային դրույթներում:
2.	ՀՀ կառավարություն	Հոդված 4	«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 12-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետում՝ որպես ՀՀ-ից ելքն արգելող հիմք՝ նախատեսել նաև խափանման մյուս միջոցները:	Առաջարկությունն ընդունվել է: Օրինագծի 4-րդ հոդվածով օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 12-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետը լրամշակվել է, համաձայն որի ՀՀ-ից օտարերկրացու ելքն արգելվելու է, եթե հարուցված քրեական գործով նրա նկատմամբ կիրառվել է խափանման միջոց, բացառությամբ այն դեպքերի, երբ քրեական հետապնդման մարմինը տվյալ անձին Հայաստանի Հանրապետությունից ելքի գրավոր թույլտվություն է տվել:
3.	ՀՀ Աժ պատգամավորներ Ա.Մինասյան Ա.Նռանյան Ս.Բալասանյան Շ.Թորոսյան Ա.Մարտիրոսյան Հ.Մարգարյան Տ.Վարդապետյան Ա.Շահբազյան	Հոդված 1	Նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 1. «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-47-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 7-րդ հոդվածի 1-ին մասի «Հայաստանի Հանրապետության տարածքում կարող են մնալ առավելագույնը 90 օր ժամկետով՝ 1 տարվա ընթացքում» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության տարածքում անընդմեջ կարող են մնալ մինչև 90 օր ժամկետով» բառերով:» Գործող օրենքով առանց մուտքի վիզայի ՀՀ մուտք գործող օտարերկրացիները ՀՀ-ում 1 տարվա ընթացքում կարող են մնալ մինչև 90 օր, իսկ մուտքի վիզայով ՀՀ մուտք գործող անձինք մեկ մուտքի	Առաջարկությունը չի ընդունվել: Ներկայացված օրինագծով այն պետությունների քաղաքացիները, որոնց համար սահմանված է ՀՀ ժամանելու առանց մուտքի վիզայի ռեժիմ, ՀՀ տարածքում կարող են մնալ առավելագույնը 180 օր ժամկետով՝ մեկ տարվա ընթացքում, եթե ՀՀ միջազգային պայմանագրերով այլ ժամկետ սահմանված չէ: Առաջարկվող փոփոխությամբ ենթադրվում է, որ նշված օտարերկրացիները մեկ տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում կարող են մնալ անընդմեջ մինչև 180 օր ժամկետով, ինչպես նաև այդ իրավունքից օգտվել մաս-մաս՝ մի քանի անգամ մուտք գործելով հանրապետություն: Ի դեպ, անհրաժեշտ է նաև հիշատակել, որ մեկ

		<p>ընթացքում (ոչ մեկ տարվա ընթացքում) 120 օր գտնվելու ժամկետով՝ 60 օր երկարացնելու հնարավորությամբ: Օրենքի 7-րդ հոդվածով սահմանված սահմանափակումը վերաբերում է կոնկրետ ժամանակահատվածին (1 տարուն), իսկ 9-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումը՝ 1 մուտքին (գործողությանը): Միաժամանակ, կատարված ուսումնասիրություններով (ՌԴ և Բուլղարիա) պարզվել է, որ մի շարք երկրների համապատասխան օրենսդրություններում նշված դրույթը ձևակերպված է առաջարկվող տարբերակով: Առաջարկության ընդունումը կվերացնի գործող օրենքի 9-րդ և 7-րդ հոդվածներում կիրառված սահմանափակումների սկզբունքների տարբերությունը: Ելնելով վերոնշյալից և հաշվի առնելով, որ ՀՀ առանց մուտքի վիզայի ռեժիմով ժամանելուց արտոնյալ ռեժիմ է, առաջարկվում է ընդունել սույն առաջարկությունը: Առաջարկության ընդունումը նաև էականորեն կնպաստի առանց մուտքի վիզայի ՀՀ տարածք մուտք գործելու հրավույնք ունեցող պետությունների քաղաքացիների ազատ տեղաշարժին:</p>	<p>տարվա ժամկետը հաշվարկվում է առաջին մուտքի օրվանից: Ավելին, 180 օրյա ժամկետի սահմանումն, ըստ էության, օրերի քանակի առումով հավասարեցնում է առանց մուտքի վիզայի և մուտքի վիզայով Հայաստանի Հանրապետությունում գտնվելու ռեժիմները: Ներկայացված առաջարկության ընդունման դեպքում գործնականում կարող է ստեղծվել իրավիճակ, երբ ընդամենը մեկ օր Հայաստանի Հանրապետությունից բացակայելով, օտարերկրացին կարող է կրկին մուտք գործել Հայաստանի Հանրապետություն և անընդմեջ մնալ ևս 90 օր: Այս առումով կարծում ենք, պետք է պահպանել մեկ տարվա ընթացքում որոշակի քանակությամբ օրեր Հայաստանի Հանրապետությունում գտնվելու սահմանափակումը առանց մուտքի վիզայի Հայաստանի Հանրապետություն ժամանող օտարերկրյա քաղաքացիների համար: Այլապես իմաստազրկվում է Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակ ստանալու ինստիտուտը:</p>
--	--	--	---